

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաճախիչ. գլխ. ղեկավար Վ. Դ. ԱՌԱՔՆՆԱԿԱՆ

Նախորդ հոդվածում¹ առանձնահատուկ կերպով նշեցինք բարբառների այն դերի մասին, որով ճշտվում են մեր հին գրական լեզվի շահակացված և չճշտված բաղմաթիվ բառիմաստները, Այստեղ ևս կփորձենք կենդանի խոսվածքների միջոցով իմաստավորել այնպիսի մի շարք բառեր, որոնք ցայժմ բացատրված չեն, կամ սխալ են մեկնարանվել: Այս կարգի բառերի ճշտումը մեր բանասիրության համար կարևոր է, որպեսզի մեր հին գրական երկերը ճիշտ հասկանանք:

Բշտել բայը Աճառյանը բերում է Ոսկեփորիկից. «Քան զտասն դահեկանն ի զրկանաց, զոր տաս աղքատին և բշտես զնա»: Ս. Մովսիսյանը, որ հաճախ է հիշատակվում Աճառյանի կողմից և արժանի է հիշատակության հայ բարբառների իր գիտությանը, Աճառյանին նամակով գրում է, թե բշտել նշանակում է համոզվածել, կշտամբել և կենդանի է Մուշում բիշտել ձևով: Աճառյանը կասկածով է վերաբերվել այս բացատրությանը և գրել է, որ «նշմ մեկնում է «կա՛մ» է բշտել և կամ որպէս ռամկօրեն բշտեցնել գանձի»: ԱԲ-ն (Առձեռն) ջնջած է այս բառը:

Բշտել բայը կենդանի է տարբեր խոսվածքներում բիշտել ձևով, որ ավելի նշանակում է ուժեղ սաստել, կարճ վերավորական խոսքով լուեցնել՝ արդելել: Էրեխուն հրեշ՝ բիշտեցի. նույնիսկ՝ բարկությանը ասված՝ ձնեղ կըրա, վեռն տուր և նման խոսքերը բիշտել են նշանակում: Ուրեմն՝ բայը տեղ պետք է ունենա բառարաններում և ոչ թե ջնջվի:

Բողբոջ բառը հայտնի գրական բառ է, որ գալիս է մեր հին գրականության առաջին օրերից: Ըստ Աճառյանի բողբոջ բառը գրված է նաև բողբոն, բխբուն: Դժբախտաբար Աճառյանը այս բառի համար զավառական բաժին չունի: Թիխպուն հնագույն ձևը պահպանվել է Աբովյանի շրջանի Կոսայք (Երկավան) գյուղի խոսվածքում բիխպուն ձևով միայն լավաշ հացի համար՝ բողբոջում և բողբոջ նշանակություններով, ունենք նաև բիխպյունել՝ բողբոջներ գոյանալ (հացի մասին):

Մեզ թվում է բողբոջ և պղպջակ բառերը «Արմատականում» խառնվել են: Պղպջակ բառի տակ նույնպես հիշատակվում է բիբուն, բիբնալ, բղբնջիլ: Այս վերջինները ոչ թե պղպջակից են, այլ բողբոջից: Բողբոջը նույն խոսվածքում տվել է բիբնալուն, իսկ պղպջակը՝ պղբոնակ, ընդ որում բիբնալուն ոչ թե նշանակում է փափուկ ուռած հաց, այլ նշանակում է բողբոջներ ունեցող՝ այսինքն այն, որ ժողովուրդը անվանում է ծաղիկ հաց: Եվ հացի բիբնալունները (խոսքը լավաշի մասին է) ոչ թե փափուկ, այլ սովորաբար չոր ևն լինում նույնիսկ փափուկ հացի վրա:

Պղպջակի զավառական բաժնում Աճառյանի կողմից բերված է նաև պիպնալ իբրև առաջացած լինի պղպջակից, սակայն պղպջակը տեսանելի երևույթ է, չրի վրայի օդալից պալարները, որ ամենից լավ երևում են առատ անձրևի ժամանակ, մինչդեռ պիպնալը ձայնային երեւույթ է: Իսկպան թված մածունը պղն-պղն ձայններ է հանում: Եվ պղպջակի պարզ արմատը ոչ թե պղպուջ է, այլ պուղ է, պղպուջ կրկնություն է պուղպուղ-պղպուղ ձևերից: Նույն գյուղի խոսվածքում կա պղպղղոտնել, որ նշանակում է մարմինը ջրալից պալարներով ծածկվել:

Արմատական բառարանում բերված է ուլու բառը, որ ըստ Երեմիայի բառարանի «դեղծ» է նշանակում: Այս բառը հույի ձևով պահպանվել է Եղեղնաձորի շրջանի Աղավնաձոր, Խաչիկ և այլ գյուղերի (հին տեղացիների) խոսվածքներում. հույի դեղձի այն տեսակն է, որ արարատյան խոսվածքներում կոչվում է լոզ (լոձ):

Պրիխի, Աճառյանը բացատրում է «փլանալ, ալուրիլ, հոտիլ»: Պրիխի չի նշանակում «փլանալ», այլ նշանակում է փլացած սեխը, ձմերուկը և նման առարկաները հպումից բացվել՝ կազմը քայքայվել: Բառի միակ գործածությունը ըստ «Արմատականի» առկա է Վարդանի առարկաներում. «(Ձմերուկն) պատկեցաւ և պրիսեցաւ և ելաւ ինխութիւնն արտաքս»: Այստեղ բառը կիրառված է հենց մեր ցույց տված նշանակությամբ:

¹ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4, էջ 35—45:

Պիլիկի բայը պահպանվել է մի քանի խոսվածքներում փրթիսի, փրթիսիվի, փրթիսուկ, փրթիսիվուկ ձևերով ճիշտ միևնույն իմաստով, ինչ իմաստով գործածված է Վարդանի առակներում² այսինքն փշացած պտուղների կաղմը թալքայվել՝ նեխությունը դուրս դալ, փոս ընկնել և այլն:

Պարանիլ բայը գործածված է Աստվածաշնչում. «Ելեալ ոգին անդրէն ոչ դառնայ եւ ու պարանիլ շունչն գոռեալ»: Այս բառը «նոր բառգիրք հայկազեան լեզուի» բացատրում է «խորու պարանալ յետս քարշել, յետս կոշել»: Աճառյանը ճիշտ վերարտադրում է այս բացատրությունը «դառնալ, յետ դառնալ»: Նա բերում է նաև իբր գավառական մի ձև նույնությամբ, առանց գավառը կամ բարբառը նշելու. եթե կա այդպիսի ձև բարբառներում, շատ լավ է, սակայն այս բայը պահպանվել է Գորիսի, Եղեգնաձորի հին խոսվածքներում (Արենի, Աղավանձոր, Խաչիկ և այլ գյուղերում) պլրանել, պրրանել ձևերով, որ ոչ միայն շուտ տալ և շուտ գալ, շրջել, շրջվել և պառկել նշանակությունները ունեն, այլև փոխաբերաբար ունեն հայհոյանքի արտահայտություն, մանավանդ ներգործական ձևը:

Պշլիլ բայը Աճառյանը ըստ Երեմիա Մեղրեցու բառարանի բացատրում է «չիմարանալ, շուտիլ, ալլալիլ»: Այս բացատրությունից հետո գրում է. «Թու՛մ է, թէ շփոթված է Բլշիլ ձևվից, որ է Բլշանալ, աչքը տկարանալ, մթագնիլ»: Մինչդեռ Մեղրեցին բառը ճիշտ է բերել, և բացատրությունն էլ միանգամայն ստույգ է. այդ բառը նույնությամբ առկա է Եկեղեցիի խոսվածքում. «Խո՛նչ ես պլշլի հիշկում»: Մինչդեռ Բլշանալ նշանակում է վատ տեսնել:

Պուտ բառը Աճառյանը բացատրում է իբրև «հարսնուկ, ծափկոտրուկ»: Այստեղ թյուրիմասդություն կա: Պուտ, որ որոշ խոսվածքներում դարձել է տուպ, բուրդովին ուրիշ բույս է: Մենք գիտենք դրա երեք տեսակը՝ հալի պուտ, որի մատղաշ բողբոջը և կիսահասուն խաժխաժը ուտում են: Թուրքի պուտ, որ անուտելի է, ծաղիկով քիչ է տարբերվում նախորդից, բայց սերմնարանով (խաժխաժ) խիստ զանազանվում է: Երրորդ տեսակը, որ անվանում են դավի պուտ, ունի խոշոր փշիշոտ թուփ, բողբոջը և սերմնարանը ավելի քան հինգ-վեց անգամ մեծ են նախորդներից, և դարձալ մատղաշ բողբոջը և կիսահասուն սերմնարանը ուտում են. վերջինը անպայման կծույթ, այլապես խիստ դառն է:

Իսկ նախնուկը կամ ծափկոտրուկը, որ կոչվում է նաև ամանկոտրուկ, մեզանում՝ կուծկոտրուկ, բուրդովին ուրիշ բույս է. ունի ղեղնագույն կամ բաց կարմիր ծաղկաթերթերով ծաղիկ, որ զաշտից տուն շեն բերում, որպեսզի կուծերը շկոտրվեն:

Փետս, անստույգ, նորագյուտ բառ է, որ մեկ անգամ գործածված է Եփր. Վկ. արև. 72. Ի փետս մտանել «յորդոգեղ» ոճի մեջ. «Ի փետս մտեալ ի գալթակղութիւն յօժարեցուցանէին»: Ահա բոլորը, ինչ ասված է այդ բառի մասին «Վկայք»-ում: Աճառյանը կամեցել է ուղղել ի միտս մտանել, Վարդանյանը մերժել է, ասելով՝ այդպիսի ոճ չկա: Աճառյանը համարում է կորում ոճ, ուղում և հաստատել, որ եղել է և բերում է մի անծանոթ ու հայերենին խորթ օրինակ. միևնույն մեկի ռեզլը:

Փետս բառ չկա. այդ բառը իսել է. փ և և շփոթված են. ի իսել մտանել արտահայտություններ Եկեղեցիի խոսվածքում ստացել է իսելի մտնել ձևը: Մեկի իսելի մտնել նշանակում է այդ մեկին զրգել՝ համոզել, որպեսզի այս կամ այն արարքը գործի, կամ շարժի: Մեկի իսելը մըտնել նաև նշանակում է այդ մեկի ունեցածը խաբելով յուրացնել: Գրաբար օրինակի միտքը չբերվել է:

Ջառ բառը «Արմատականում» բացատրված է խումբ, շարք և ասլու ասված է. «Անստույգ բառ. մեկ անգամ ունի Մխիթար Այրիվանեցին էջ 9»: «Ի սկզբան ատուրն զարեգակն ջերմ և շոր և անուագնաց, իսկ չերհկուն զլուսինն լի, անթերի, գողտր և կակուղ, նաև զջառս աստեղալ ջրուեաց ի վերայ օդոց ցուրտ բնութեամբ»: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» ասում է. «Բմա կամ ընթերցիր—կաճառ, շար»: Ջառ բառը շի նշանակում «կաճառ կամ շար», այլ ջան բառն է, որ XIII դարում կարող էր արդեն դարձած լինել ջառ, որ պահված է մի խումբ բարբառներում և Եկեղեցիի խոսվածքում զհառ հնչումով: Ուրեմն՝ Մխիթար Այրիվանեցու ջառ բառը ոչ թե խումբ, շարք կամ կաճառ, շար է նշանակում, այլ ջան բառն է, որ դարձել է ջառ. «Նաև զջառս աստեղաց ցրուեաց ի վերայ օդոց»՝ նաև աստղերի շահերը ցրեց օդի վրա:

Աճառյանը տուրմ (երամ) բառի գավառական ձևը իբրև Աղուլիսի բարբառի բառ զնում է ասում: Այս վերջին ձևը կա նաև Եկեղեցիի խոսվածքում նույնությամբ (ջան տուրմ արտահայտության մեջ): Տուրմ-ը տարմի: հետ կապ չունի, տուրմը գալիս է տոնմից: Մեծ գիտնականը

² Տե՛ս Ժողովածոյք առակաց Վարդանայ. Ս. Պետրերբուրգ, 1899, էջ 335:

հափ արմատի: Մի քանի խոսվածքներում այս բայը մնացել է հափելի ձևով, որտեղ ուն մասնակցություն է նշանակում է խել: Գնչելը օխչերի ղհրմակը հափոնց տարավ: Ասվում է նաև մարդու մասին, հրմմէն հափոնց տարավ:

Ճոտել բայի մասին «Արմատականում» ասվում է «անստույգ բառ. բերված է վարդանյ առականից: «Առիծն խնդրէր, թէ բերէր զձագ ձնր, զի ոք որ ոչ ճոտեսցէ, զայն ինձ հարսն արասցնեմ»: Մառը բացատրել է. «окажется безобразной», որ բացարձակ սխալ է: Այս բայը նրստալ ձևով պահպանված է մի շարք բարբառներում, որ նշանակում է պստիկ ձայն հանել (փորրիկ կենդանիների, նաև երեխաների համար է ասվում): Մուկը նրստաց, էրեխեն նրստաց: Սրանից ունենք նաև՝ նրստոց, նրստոց խանել, ուրեմն «զի ոք որ ոչ ճոտեսցէ» նշանակում է՝ որ սեկը, որ չծտա: Ժոտել բայի արմատը պետք է լինի նաև Երեմիա Մեղրեցու հիշատակած ճիգ բառը, որ մեր խոսվածքում և այլուր ճիծ է և երեխա է նշանակում:

Ուռի բառի համար «Արմատականում» ասված է. «հպարտ». ուռի միայն երեմիայի բառաբանը: Այս բառի բայական ձևը ունեն մի շարք խոսվածքները՝ ձտել. մէշը մի ուռի—նշանակում է մի հպարտահա, շատ ա ուռում, ինչի՞ վրէն ա րտղար ուռում: Սակայն բառը իր ձևով նմանվելով ուռչել բային՝ նկատվանի խոսվածքում ուռել իրեն անկախ բայ վերացել է՝ իր նշանակությունը տալով ուռչել-ին: Լեզվաբանության մեջ այս երևույթը կարծես չի անվանված. իմաստը փոխանցվել է իր նույնանունին, իսկ ինքը վերացել է: Կարելի է կոչել փոխանցություն:

Ժիշտ այդպիսի մի բառ է բռնուիլ բայը, որ բացատրված է «ունեցած պերճախոսությամբը ոչարժեքա», անպարծկություն անել: Կոտայքի (նկատվանի) խոսվածքում բռնուիլ բայը իր նմանակի (բրբրուիլ) հետ շփոթվելով՝ վերացել է: Մի քանի բարբառներում շատ մի բրբրուիլ, շատ ես բրբրուիլում, նշանակում է շատ մի պարծենա կամ ուրախացիր, շատ ես պարծենում կամ ուրախանում:

Նման մի երրորդ բայ է ճղել բայը ճչալ, ճղալ նշանակությամբ: Սա իր նշանակությունը տվել է ճղել նույնանուն բառին, որ նշանակում է ճեղքել (փէղ ճըղել), և ինքը վերացել է. երբ երեխան (օրորոցի) ուժեղ լաց է լինում, ճչում է, ասում ենք՝ էրեխեն ճիւրանը ճըղեց, մինչև իսկ էրեխեն ճըղվեց (կառծում ենք պատովեց), մինչդեռ նշանակում է ճչում է:

Նղեզ բառը «Արմատականում» բացատրված է «զետին, որ քրտինքի նման ջուր է թորում»: «Վիմական տարեգրքից» վերցված բառ է հետևյալ նախադասությամբ. «Ետու զիմ զանձագին հողերն՝ պղերմստու տնափրքն, առչի եղեզն, Գինեկոյ ճանապարհն, միջի եղէզն»: Ի՞նչ մի արժեք պիտի ունենա այդ «Բրտինքի նման ջուր քորող գետիներ», որ վաճառողը զանձագին հող համարի: Նղեզ նշանակում է առու, որ մեր խոսվածքում պահպանվել է աղբզ ձևով: Վիմական արձանագրությունների մեջ հողերի վաճառման գործարքներում շատ հաճախ են հիշատակվում առուները, որոնք հողերը իսկապես զանձագին են դարձնում:

Մատխանը բառի համար «Արմատականում» ասված է «մի տեսակ բույս»: Մատխանը այն բույսն է, որ աճում է ճամփեղերի և մի քիչ բարձրանալով ճյուղավորվում ու փռվում է հողի վրա: Ուտելի բույս է, մինչև իսկ որոշ բարբառներում կոչվում է հացուկանի, իսկ Գորիսում հենց այդպես էլ մատխանը է կոչվում. մի քանի խոսվածքներում այդ բույսը անվանվում է ճնդղալ պաշար:

Չաչ բառը, ըստ Աճառյանի նաև չաչեր, որ նույնի հոգնակին է, բացատրված է «մի կարգ ծառերի առանձին անեցնելու համար կտրված և զատ տնկված ճյուղ». ըստ Ալիշանի «Հայ բուսական» նաև շողգովի տերև: Այս բացատրությունը սխալ է, որ գալիս է «նոր բառգիրք հայկական լեզուի» գրքից, ուր ասված է. «Բառ ռամկոբէն որպես շառափի կամ ոստ բեղուն հատնալ անառմատ տնկելի ուրոյն. գոխ»: Սրանից հետո բերված է օրինակը. «Մաղմզկով տնկելիք՝ խնձորի, նոնենի և այլ այսպիսիք և այնքիկ, որ շաշիւ պտկելին, այսինքն առանց քորի տրնկել. Բրնջի, նումայի, թթենի, սերկեիլի, ձիթենի և այլ այսպիսիք: Զբերուկ ճիւղն առնելու չաչեր և շուրջանակի փոսոյն շարեա: Օրինակը բերված է «Գիրք վաստակոցից», որտեղ բաղմաթիւ զավառական բառեր կան: Օրինակը մեզ ասում է, որ չաչ ոչ թե կտրված ճյուղն է, այլ ճյուղի վրա արված չաչը: Իսկ ի՞նչ է այդ չաչը: Չաչ նշանակում է աչք, որ ցավոք «Արմատականի» ԱԶԲ բառի զավառական բաժնում չկա: Անշուշտ առաջացել է աչ արմատի շ-ի անտիցիպացիայով (չ-ն առաջ է եկել, բայց և մնացել է իր տեղում): Նկատվանի խոսվածքում չաչ մնացել է իբրև մանկական բառ. չաչը կըխանեմ, բհեր չաչկեցերտ պաչեմ և այլն:

Ուրլո բառի համար «նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում ասված է. «Կամ որ՝ լոբ. բառ անստույգ. անուն թռչնոյ. որլոբ և հափալ գղեթորոս և զմեկունիոն (ուտեն)»

տարածված է այգիներում (հատկապես խաղողի)։ Եթե այգին վարակվում է այս բույսով, ենթակա է լինում բանդման։ Գեղձը նույն գաղձն է, որ բարբառներում կոչվում է զելուկ։ Իսկ նոր դրականում՝ զայլուկ։

Իլ բառը իլիկն է, որ բարբառներում անվանվում է քեշի։ Լիդենը „Armenische Studien“-ում նկատի ունենալով Եփեսոսի ողնաշար և լատիներեն verzeillus (իլիկ) և vertebra (ողնաշար) բառերը, ենթադրում է, որ իլ սկզբնապես նշանակել է ողնաշար և ըստ այսմ էլ ողն, ուլն բառերի հետ դնում է հնդեվր. ole արմատից (ծուկ, դարձնել)։ Աճառյանը Լիդենի այս բացատրությունը մերժում է, մինչդեռ իլ, իլիկ հայերենում նշանակում է իրոք ողնաշար։ Մեր խոսվածքում իլիկ բառը միայն և միայն ողնաշար է նշանակում, իսկ մանկու գործիքը՝ իլ-ը, անվանվում է քեշի։ Ինչպես երևում է, Լիդենի կարծիքը ճիշտ է, որը անվերապահորեն ընդունում է Boissac-ը։ Աճառյանը իլ բառից է դնում նաև Ղարաբաղի ըլըպուտիկ բառը, որ նշանակում է իլապուտիկ։ Ելկավանի խոսվածքում այս բառը զարմանալի փոփոխություն է կրել՝ դառնալով ալապուտիկ։

Կանոյ բառը գործածել է Փափստոս Բուդանդը կանոյ մի ջուր կապակցությամբ։ «Նոր բառգիրքը» բացատրում է անօթ ջրոյ, սափոր. Աճառյանը նույնությամբ բերում է՝ անօթը ամսն դարձնելով։

Այս բառի ծագումը չեն բացատրել, եթե շահվենք Գաբամաճյանի բառարանը, որը կալնոյ համեմատել է արաբերեն զարա բառի հետ։ Մենք կարծում ենք կանոյ-ի արմատն է կալ, որ նշանակում է կահ-կարասի։ Այս բառի մեջ կան՝ աման նշանակությունը բացահայտ է, սրանից է կանոյ, կանառեկ, կանավորություն և այլն։ Իսկ ինչ վերաբերում է ոյր ածանցին, սա տեղա է պարոյ, կափոյ, գուցե նաև փեղոյ (գլխարկ) բառերի մեջ։

Լափ բառը «Արմատականում» բացատրված է «շան կերակուր, երեխայի փափուկ ուտելիք»։ Անշուշտ ճիշտ է այս բացատրությունը։ Մանդակունին ունի՝ «Շունը եկեալ լիղեսցեն դրերան (փսխողի), զի կարոտեն լափին»։ Սակայն լափ նաև ձեռքի ափ է նշանակում։ Համեմատելով՝ «Լափեցին ձեռամբ և լեզուով իւրեանց (Դատ. է 5)»։ Ելկավանի խոսվածքում լրփել նրշանակում է ոչ թե լափել՝ այսինքն լակել, այլ՝ ափով լիարուտն վերցնել։ Լրփեց տարալ՝ Այս իմաստով պետք է որ լինեն Սալմաստի, Մարաղայի լրփել, Տիգրանակերտի լրփել։ Բացի այս, մեր խոսվածքում ունենք ափլրփել, որ նշանակում է խախտափել՝ այսինքն մթնում ափով շոշափելով գնալ։ Այս լափից պետք է լինի նաև լափուկ բառը. դա մի ափաշափ տափակ քար է, որ դարձել է նաև լփուկ։

Խխումն բառի մասին ասված է. «Անստույգ բառ, մեկ անգամ ունի Կլիմաքոս»։ «Բժշկեալ ցամաքեցուցանէ զայտումն և զխխումն»։ «Նոր բառգիրքը» մեկնում է՝ «ընթերցիր կամ իմա խխաթումն» (նշանակում է ուռած վերք, վերքի թարախ)։ Այս բացատրությանը Աճառյանը ավելացնում է. «Ունիք Պոլսում խխիլ, մեջը ասեղ խոթելու պէս ցավ զգալ»։ Այս իմաստը արմար չէ վերի վկայութեանը։

Խխումն բառը այս վկայության մեջ նշանակում է ջրգողություն։ «Բժշկեալ ցամաքեցուցանէ զայտումն և զխխումն» բժշկելով շորացնում է ուռուցքը և ջրգողությունը։ Խխմլ մի շարք բարբառներում նշանակում է անշափ ջուր ներծծելով փափկել։ Ասվում է հատկապես հողի պատի, հացի, արտի մասին։ Խխում բառը, որ նշանակում է շատ ջուր ներծծած, մեր նոր գրական լեզվում սովորական է. «Օ գանգութները խխում՝ կաթիլներով ծանրացած» (Վարուժան)։ «Ու ցրված են աղբիկները կաթավող շորերը թաց ու սև վարսերը խխում» (Վ. Դավթյան)։

Ճնդիկ բացատրված է «զուտ սև»։ Հավանորեն բառը սև է նշանակել, և հետո դարձել է սև-ի համար բնութագրական բառ։ «Վաստակոցը» այդպես էլ գործածում է. «Պղատոն իմաստունն զպօղն (գորշասպիտակ ձին) գովեաց և ի հետ զճնդիկ սևն և ապա զքումայթն» (արմաշագույնը)։ Ճնդիկ այստեղ նշանակում է զուտ, մաքուր, որ հավասար է բարբառային սրփ-ին սրփ սև կապակցության մեջ։ Այդպես է նաև մի շարք խոսվածքներում՝ ճնդիկ սև՝ այսինքն ընդունալ։

Ճողճիլ բառը մեկ անգամ գործածել է Մովսես Կաղանկատվացին։ «Ընդ դեղնագույն փուտուրսն փորը ինչ կանաչութիւն հավասար խառնեալ արտաքս ճողճիլ»։ Աճառյանը ճիշտ կերպով բացատրում է «ցղոնալ, փայլիլ»։ Այս բառի համար նա գաղափարական բաժին չունի։ Մեր խոսվածքում կա ճողճիլ բառը, որ նշանակում է նոր սկսել ճառագայթներ հանել (արևի մասին)։ Արևը ճողճիլում ա։

Ճնումնում բառը սխալ է տառադարձված և բացատրված է մի անսակ բույս: «Հայ բուստ-
կը» կապել է արաբերեն ջումջում բառի հետ, մինչդեռ Աճառյանը ասում է, թե ինքը արաբերեն
բառարաններում այդպիսի բույս չի գտել: Ճնումնումը ջամջամ բառն է, որ կա բարբառներում:
Կիսափուշ բույս է, որի սերմերը կառնում են հագուստին, ոչխարի բրդին, անասունների մաշե-
րին և այլն, և որ արևմտահայ բարբառներում կոչվում է խնամի:

Մահաս բառի համար իբրև զավառական ձև ու իմաստ բերված է մաջա, իբր թե նրևանում
նշանակում է վերնադաստակ: Մաջա չի նշանակում վերնադաստակ, այլ թևքի այն մասն է, որ
ձևերի մոտ նեղանում է և կոճակներով կամ ճարմանդով կոճկվում: Փոխանունությամբ կաղմա-
խոսական բառը դարձել է դերձակային:

Մարգինուշ բառը «Հայ բուսակը» բացատրել է իբրև «մկան ծիրտ» կամ վայրի նոսն ծա-
ղիկ: Աճառյանը «բոստ խոփ» բացատրել է «մկնդեղ»՝ կապելով պարսկերեն marjimus բառի
հետ: Աճառյանը ճիշտ է հասկացել բառը, երկավանի խոսվածքում այն դարձել է մալգլամուշ՝
մկնդեղ նշանակությամբ:

Մազբայ բառը «Արմատականում» բացատրված է «արտօրայք, շրջակայ մշակելի հողեր»
և բերված է երկու վկայություներով: «Այգին իւր մագրովն»։ Վիմակն տարեգիր, էջ 85: «Ջղեղն
Մեծոփ իւր մզբային» (նույն տեղում, 133): Այս վկայությունների մեջ հերքված մազբայ բառը
իրարից բոլորովին տարբեր երկու բառեր են: Առաջին վկայության մեջ մագրովն ոչ թե մազ-
բայ բառն է, այլ մազք բառը, որ նշանակում է միջնակ կամ ցանկալատ՝ երկու հողերը մի-
մյանցից բաժանող սահմանները, այլապես ի՞նչ է նշանակում այդ իր շրջակա արտօրայքով՝
մշակելի հողերով: Իսկ երկրորդ վկայության մեջ մզբայինք իրոք մազբայն է, որ դաշտեր,
հողեր և նշանակում: Մեծոփը իր հողերով: Այս ճշտման համար ապացույց կարող է ծառայել
նաև բառերի դանազանաձև հոլովումը:

Թայլ բառի մասին «Արմատականում» ասված է. «Մի տեսակ բույս», ապա իբրև հոմա-
նիշ դրված է փրփրեմ, հոռում սպանախ: Փրփրեմ-ի բացատրության մեջ ասված է «անմեղուկ,
կոճկորակ, դանդուղ»: Թայլ-ը փրփրեմը չէ, այլ բելուկ, կամ բարբառներում բախտիկ կոչված
բույսն է, որ մատղաշ ժամանակ իբրև բանջար խաշվում և ուտվում է: Անասելի տարածված մո-
խախտ է. մեկ թուփը մի քանի տասնյակ հազար սերմ է տալիս, մեկ մետրից ավելի երկար
ճյուղավորված ցողուն ունի: Իսկ փրփրեմը գետնին կպած բույս է և հավանորեն փրփուր բա-
ռից է ծագում. եփելիս փրփրանման հյութ է գոյանում:

Փուռ բառի մասին գրված է «Անստույգ նշանակությամբ յետին շրջանի բառ»: Գործած-
ված է մեկ անգամ. «Եւ գեղեցիկ թագուհի մի ի վերայ աթոռոյն նստած և խալիւյայ մի՝ փուռ
մարդարտով լցած ի ներքե թագուհոյն»: Աճառյանը սրան ավելացնում է. «Այս անստույ-
բառի հետ Ս. Մովսիսեան կցում է Բուլանուխի փուռ «շատ, շափից ավելի»: Մովսիսյանի նը-
շանակումը փուռն թայն է, որ կույտ է նշանակում: Իսկ Աճառյանի բերած փուռ-ը բուռ բառն
է, որ կիր է նշանակում, իսկ մեր խոսվածքում ունի սպիտակ նշանակությունը և գործածական
է բուռ սպիտակ կամ բուռ-սիվտակ: Իսկ որ այդ բուռ բառը կարող էր նաև փուռ լինել սպի-
տակ նշանակությամբ, տե՛ս Աճառյանի բերած բուռ բառի տակ փուռ ձևը:

Արինն «մի տեսակ բույս է»: Ունի միայն Արինյանի «Հայ բուսակը»: Թվում է, թե այդտեղ
որևէ մեկի կողմից արված սխալագրություն կա: Արեվյանի շրջանի Կապուտան գյուղի խոս-
վածքում այդ բառը կա փաբիսք ձևով, որ հաճախ է նշանակում: Ուրեմն արինն-ը պետք է ուղ-
ղել փաբինք:

Սուրբայ «Արմատականում» բացատրված է միայն, լով: «Ջորդուն ի տեղն եթող և սուրբայ
հեծելով իրդար արար ի վերայ վանայ»: Այստեղ սուրբայ նշանակում է միայնակ, մենակ և ոչ
թե միայն, լով: Այդ բառը մնացել է բարբառներում սուրբա ձևով և նշանակում է անասունների
այն մասը, որ չի կթվում ու չի լծվում և ամենից առաջ է սար գնում, բաղկացած է ստերը, շը-
լծվող, տվյալ դեպքում ոչ պիտանի անասուններից: Սկզբնապես նշանակել է հորք կամ գաւ-
շունեցող, կամ սուր անասուններ, այսինքն միայնակ, մենակ:

Պուպտ, հայերենին անհարադատ գրություններով այս բառը բացատրվում է «հովուի բիր կոչ-
ված բույսը»: Ամատունին աղբընք բառի տակ հիշատակում է պատպատ: Արդարև, այս
պատպատ բույսը կա մեր խոսվածքում բաղբաղ ձևով, որ Շիրակում կոչվում է աղբընք:
«Համբար» թարգմանիչը գործածել է բանգ ձևով, Աճառյանը «Արմատականում» բերում է
երկու ձևով. բանգ, բանկ «մի տեսակ թունավոր և թմրեցնող բույս է»: Հենց այս բանկը կամ
սղբընքն է միևնույն բաղբաղը: (Վուպտը). որ իրոք թունավոր, խենթացնող բույս է և Հա-
յաստանում շատ է տարածված:

Սուֆ, «ընտիր ասուելայ կտոր»: Այս բառը, որ հին մատենագրության մեջ մեկ անգամ է գործածված, մնացել է նկարագրի խոսվածքում նույնությամբ: Բայց ոչ թե կտոր է նշանակում. այլ իրրե ածական գործածվում է այնպիսի կտորի մասին, որ խավ չունի, սուֆ կտոր ա (այսինքն խավ չունի):

Վառել բայը Աճառյանը բացատրում է. կպցնել, կպել, փակցնել: Համարված է անստույգ բառ, որ գործածված է Ոսկերեքների «Մեկնութիւն Եսայայ մարգարէի» գրքում: Այս վառել բայը առանձին վերոհիշյալ նշանակությամբ առանձնացնել վառել, զինել նշանակությամբ բայից և առանձին դնել, մեզ թվում է ճիշտ չէ: Ոսկերեքների նախադասություններն են. «Յորժամ էին մարդ դամենայն ինչ զառնն առեալ զանգամօքն վառիցէ, տառապանք են առնն: Յորժամ լուսկին ի գլուխ է յականջս է ի բաղուկս վառիցէ, կարծին այնուհետև ձեռք առնն յողորմութիւն»: «Նոր թաղիրքը» ճշտությամբ բացատրում է զարդարել: կպցնել, կպել, փակցնել բացատրությունը բռնագրության է: Ինչպես զինել բայը զարդարել և զինել է նշանակում, այնպես էլ վառել բայը նաև զարդարել է նշանակել: Համեմատիր, ի զէն և ի զարդ վառելով: Հանդերձ գինու, զարդու: Նաև ձիակնէ բառը, որ նշանակում է ձիուն անհրաժեշտ արդուպարը:

Մշղին անստույգ նշանակությամբ բառ է, որ գործածել է միայն մի անգամ Գրիգոր Աղ-բամարցին: «Անգ է նահատակեալ Առաքեալն Թումայ՝ հարեալ ի մլըղեմէ»: Աճառյանը հարցականով զննքի անուն է համարում: Մշղիս բառը պետք է կարդալ նշղիս՝ այսինքն նմղիս, որ օտարական է նշանակում. այսինքն «այնտեղ նահատակվեց խփված օտարականից»:

Մանգլալ բառը մեկ անգամ գործածել է Օրբելյանը և ինքն էլ բացատրել է: Աճառյանը գրում է. «Անշուշտ թաթարական բառ է և կամ յատուկ անուն է և կամ մի տիտղոս»: Օրբելյանի նախադասությունն է. «Սա (Ղազան զանը) յոյժ ատեցող էր քրիստոնեից և թշնամի եկեղեցեաց, որ ասպատակ ածեալ՝ գայր իբր զմորիկ փոթորկեալ նախամարտիկ լինել, զոր սանդլալ կոչեին»: Սանդլալ բառը ըստ Օրբելյանի նշանակում է նախամարտիկ: Օրբելյանը ասում է, թե թաթարները նախամարտիկին մանդլալ էին ասում:

Վարսակ բառը «Արմատականում» բացատրված է «մի տեսակ արմտիք»: Վարսակը արմտիք չէ, այլ հացարույս է, որի հատիկը ձիերի լավագույն կերն է. սրա վալքի տեսակը կոչվում է խոփուկ, իսկ շատ խոսվածքներում անվանվում է պոչուկ: «Նոր բառգիրքը» և ուրիշները կապում են վարս բառի հետ, բայց Աճառյանը չի ընդունում: Աճառյանը բույսը չի տեսել, ուստի մերժում է վարսի հետ այդ բույսի անվան կապը, մանավանդ որ մերժում է նաև Հյուրըմանը: Եթե նա բույսը տեսներ, անպայման կընդուներ, որ այդ բույսի անունը վարսից է առաջացել, քանի որ իրոք վարսավոր է:

Աճառյանը «Արմատականում» արձանագրել է փակցել բայը, որը նախորդ բառարանները չունեն, և լավ է, որ չունեն: Այդպիսի բայ հայերենում չկա: Բառը բերված է Հովհան Ոսկերեքի «Մեկնութիւն Թղթոց Պօղոսի» գրքից: «Ջար բնութիւն է արծաթասիրութիւն, անհնարին աղէտը. զողիս փակցէ, ի մտաց արկանէ»: Եվ բացատրված է «եղծանել, ապականել» այն էլ հարցականով: Դա փակցել (փակցեցէ) բայն է և նշանակում է փակել, փայփայել, խախտել, ուվել, Լեղանել: Այդպիսի ձեռագրական աղավաղումների օրինակների հարկ չկա, զրանք մեր ձեռագրերում շատ առատ են:

Քոքել բայը բացատրված է «վեր ի վերոյ կարել». սրանից էլ հանված է քոքենավոր բառը «խարաղնադգեստ, քրձեղէն հագած»: Ըստ Աճառյանի արմատը պետք է եղած լինի քոքըն կամ քոքըն, որ առանձին գործածված չէ մատենագրության մեջ:

Կոտայքի խոսվածքում «վեր ի վերո կարել» իմաստով կա ոչ թե քոքել, այլ քոքն ձևով, որ շատ սովորական է տղեր, կոշտ ու կոպիտ կարելու իմաստի համար: Աճառյանը օրինակի համար հղում է Բյուզանդացու Յրանս-հայերեն բառարանին: Մեղ թվում է, այդ բայը սխալ է արձանագրված, պետք է լինի քոքն:

Սուլու բացատրված է «հաճար»: Կասկածելի են թե՛ բառաձևը և թե՛ բացատրությունը: Մեր խոսվածքում կա սուլուֆ բառը, որ անշուշտ հայերեն չէ, սա նաև չի նշանակում, մի բույս է, որ բրնձի հետ է աճում: Սերմը կորեկանման է, որն ամեն մարդ տեսած պետք է լինի բրնձի հատիկների մեջ:

Իշլիլ բայը չկա հին բառարաններում. նոր գրողներից առաջին անգամ Աղայանն է մի քանի անգամ գործածել. նշանակում է պղկել: «Կոշտ ու տեղուց հետո թևավոր ձին հոռավետ առվույտներից մի քանի ծաղիկ գլխից», ապա նշանակում է կորզել, լուցնել, փայցնել: «Երևի ուղում ես մի բան էլ սանձի համար զլնես»: Այս վերջին նշանակությամբ բայը մնացել է մի շարք խոսվածքներում կրկնել ձևով. «էկալ հըմմեն կրկնեց տարավ»:

Թառակ բառը գործածված է միայն երեմիա Մեղրեցու բառարանում: «Արմատականը» կասկածել է բառի գոյությունը, բայց իմանալով, որ երևանում թառակ «այգիների թաղ» է նշանակում, հաստատել է: Արարատյան բարբառներում քառակ ոչ միայն «այգիների թաղ», այլև ուղղակի բնակավայրի թաղ է: Մեր նոր գրականության մեջ բառը շատ հաճախված չէ, բայց այնուամենայնիվ կա: «Գողգոթում էր ողջ քառակում, հայհոյում էր, խայտառակում» (Թուամանյան): «Նոր ձկան հոտը սաղ քառակը բռնել էր» (Պողոսյան):

Կի՛ն բառը բացատրված է «քարի ծերպ», համարված է անստույգ բառ. օրինակն է. «Խոնս կրէ մի ի հեղեղատն Տփխեաց և եհար զնա նետի: և անկաւ երէն ի կի՛ն մի քարի»: Երէն քուրի ծերպ չէր կարող մտնել. այնպիսի ծերպը, որտեղ երէ կարող է մտնել, արդեն ծերպ չէ, այլ բարայր, իսկ ծերպ ամենաշատը ճեղք է նշանակում: Կի՛ն բառը այստեղ Բիբ է նշանակում, որից ունենք կնատ. նշանակում է տալիս Բիբ ունեցող, Բիբը հատված: Այսօր էլ կենդանի է Բաբի Բիբը մտնել, որ նշանակում է քարի հետևը՝ տակը մտնել:

Սաղաղ բառի մասին «Արմատականում» գրված է. «Նորագիւտ բառ անհայտ նշանակութեամբ. մեկ անգամ գտնում եմ գործածուած Մեծոփ. 35» (Թովմա Վարդապետ Մեծոքեցոյ «Պատմութիւն լանկթեմուրայ և յաջորդաց իւրոց», Փարիզ, 1860). «Առաքեաց զմի յաշակերտաց իւրոց Յովհաննէս անուն՝ մականուն Սաղաղ կոչեցեալ՝ այր սուրբ և մաքուր հոգւով»: Եկվածների խոսվածքում ունենք սաղաղա բառը, որ ողորմածուրյուն է նշանակում, ուղեցինք կապել այդ բառի հետ, բայց պարզվեց, որ արաբերենում բացի սաղաղա-ից կա նաև սաղալ, որ նշանակում է կատարյալ, արդար, ազնիվ: Ուրեմն Հովհաննէսի մականունը եղել է սաղալ, որ նշանակում է կատարյալ, մաքուր, ազնիվ: Օրինակի մեջ ևս նշվում է այր սուրբ և մաքուր հոգւով, որ հեղինակի բացատրությունն է սաղաղ բառի:

Ճարեցի բառը բացատրված է «Ասորեակ բույսը», ծագումը արաբերենից է: Մեզ այս բույսը և նրա ծագումը, չհետաքրքրեց, սակայն տարակուսեցինք, երբ զավառական բաժնում կարդացինք, որ ժողովրդական ճարեասուկ բույսը կապվում է այս կասկածելի բառի հետ, իրրե արաբերեն ջիբջիբ բառից առաջացած: Ճարեատուկը, որ մեր՝ եկվածների խոսվածքում դարձել է ճարեատուկ, վայրի եղբւր կոչված բույսն է, որի ճարեատուկ անունը առաջացել է ճարեատուկ բառից: Արդարև՝ այդ բույսի շորացած թուփը թոնիրում վառվում է զարմանալի ճարեատուկներով, որից և սրա ճարեատուկ ժողովրդական անունը: Ուրեմն ճարեատուկը ոչ մի կապ չունի ճարեցի բառի հետ:

Ճխմէլ բայը, որ նշանակում է «տորել, ճնշել, ճզմել» գործածված է «Գիրք վաստակոցում» և Մագիստրոսի թղթերում: Աճառյանը այս բայի համար զավառական բաժին չունի. այդ բայը բարբառներում մնացել է ջիբջիբում և ձեռքով, որ նշանակում է շատ տոբել:

Նժուռը բառը միջին հալերենում գտել է Նորայր Բյուզանդացին և գործածել իր Ֆրանսահայ բառարանում. նշանակում է հահանդ, մաղմաշ, թույլ (կրակի մասին): Կենդանի է Մոկիսի բարբառում: Նժուռը, մժուռի ձևերով: Մեր խոսվածքում այդ բառը մնացել է բայական ձևով՝ նըղժըլըրե, որ նշանակում է աղոտանալով մոտենալ հանգչելու (ճարգի լույսի և լուսաբացի աստղերի մասին), բայց նշանակում է նաև՝ սկսել Բունը տանել և Բնել (էրեխէն նըղժըլըրում ա, նըղժըլըրեց):

Մոռոտ, մոռել բառերը «Նոր բառերում» և «Արմատականում» չեն բացատրված: Մոռուր մեր խոսվածքում նշանակում է շրթունք և միաժամանակ տխուր կամ Բիբը կախած, վիրավորված: Մոռուր ա նշանակում է տխրած է, Բիբը կախած է, վիրավորված է: Մոռել բայը միայն տխրել և վիրավորվել-անդամալ է նշանակում: Էտ խերյոտ հրեշի՞յ ա մըպն. ախպէրտ հէսօր մըռուր ա, ընչ ա պատահե: Ուրեմն մոռուր նշանակում է քախծոտ, տխուր, մոռալը կախ:

Թաքաղել բայը Աճառյանը համարում է անստույգ: Բառը գործածված է մեկ անգամ, հետևյալ ձևով. «Դաշար ոստիք քարաղեաց զկողս նորա»: «Առձեռն բառարանը» հիշտ է բացատրել: Այդտեղ բառը ծեծել է նշանակում: Աճառյանը այդ բայը անջատել է քարախել բայից, որ հիշտ է: Թաքաղել բայի համար կա ընդարձակ բաժին, բայց այն նշանակությունները, որոնք քարախելը իմաստով մոտեցնում են քարաղելին, զավառական բաժնում չեն արտահայտված: Թաքաղել (քարաղել) մեր խոսվածքում հայհոյական բառ է, իսկ քարաղել նշանակում է՝ կռվի, ծեծկոտուի մեջ մտնել: Ամենայն հավանականությամբ այս երկու զանազան բաղիբը խառնվել են:

Մարիբայ բառի մասին «Արմատականում» գրված է «Նորագիւտ անստույգ բառ, որ մեկ անգամ գտնում ենք գործածուած 1221 թուի մի արձանագրութեան մէջ» (Վիմ. տար. էջ 64):

«Տուաք ի Սանահնիս և ի Շաթիրայ... 20 օրավար հող»։ Մարիրայ այստեղ ծաբեր-ի տրականն /: Մարիրը կոռու Մարիւր սուտի անունն է։ Բառացի նշանակում է. տվինք Սանահնիին և Մաներին։

Ողայ բառը ունի միայն երեմիա Մեղրեցու բառարանը. բացատրված է «ծայնը լալեաց, ողր ու կոծ»։ Դա բարբառային Ողյա բառն է, որ ոչ թե «ծայնը լալեաց, ողր ու կոծ», այլ փոքաճեմ, շարիք է նշանակում. համեմատիր «Զուլվիսիան կը լսե յուր փեսային այս դեպքը.— մի բերրի տանդ մեջը,— կասե,— ողյա մը կը բերե մեր գլխուն»⁴։ «Կոն էս ողյան էկավ վեր մեզ»⁵։ Կոտայքի խոսվածքում այս բառը գործածվում է օղյար ձևով. էս ինչ օղյար բերի գերլխիս։

ЛЕКСИКО-СЕМАНТИЧЕСКИЕ НАБЛЮДЕНИЯ

Доктор филол. наук В. Д. АРАКЕЛЯН

Резюме

В армянской филологии авторитет «Нового армянского словаря» (грабара) и «Этимологического словаря армянского языка» Р. Ачаряна настолько высок, что толкования слов в них считаются неоспоримыми. Однако со времени издания этих словарей прошло много лет, армянская лексикология продвинулась вперед, вышли в свет новые словари и исследования. Настоящая статья имеет целью уточнить и прокомментировать ряд спорных толкований вышеупомянутых словарей. Такое уточнение нужно для правильного понимания древнеармянских историков.

⁴ Գարեգին Սրվանճտյանց. Երկեր. Երևան, 1978, էջ 431։

⁵ Ա. Արդ. Տեղ-Սարգսյանց. Պանդուխտ վանեցին. 1875, էջ 38։